

ԼԻՊԻՆՆ ԼՂՁԱՅԻՆ ԲԱՆԱԿԸ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԵ ԼԱԻՇԻՆ ՈՒ ՕՂԱՆԱԿԵՐԸ ԱՌԱՅ ԻՐԵՆ ՉԵՏ ԱՆԿԱՊԵՍ ԶԱՍՎԱՐԳԵԼՈՒ ԼԻՊԻՆՆ ՍՕՏԵՆԱԼԵ

Զոր. Խալիֆա Յաֆարի ղեկավարած Լիպոյ ազգային բանակը գոյնացուց Լա-
տերն ու օղանալերը առանց իրեն հետ նախապես համակարգելու լիպիական ծովային եւ
օդային տարածքներուն մօտենալէ:
Լիպոյ ազգային բանակի բարձր Սիմոն Սիմոնի շաբաթ օր յայտարարեց, որ
պետութիւնները պէտք է իրենց բանակին հետ համակարգեն նախքան իրենց օղանա-
լերն եւ Լաւերուն Լիպոյ շրջանային շուրթ ու օդային տարածք մուտք գործելը:
Նշենք, որ Լիպոյ արտաքին գործոց նախարարութիւնը հինգշաբթի օր յայտնած էր,
թէ Մոսկուայի եւ Անգարայի միջեւ Լիպոյ եւ այդտեղ ուժերու տեղակայման շուրջ տրո-
ւած ժողով մը պիտի գումարուի:
Լիպոյ արտաքին գործոց նախարարութեան տեղեկատուութեան բաժանմունքի
փոխտնօրէն Ալեքսէ Չալոյն յայտնեց. «Մօտիկ ապագային Մոսկուայի մէջ պիտի գու-
մարուի թուրք եւ ռուս դիւանագետներու միջեւ տրո՞ւած ժողով մը, որուն գլխաւոր նիւթերն
մէկը պիտի ըլլայ զինադադարի յայտարարման ժամանակ պատերազմող զինուորա-
կան ուժերու տեղակայման հարցը»:

ԱԿՆԱՐԿ

ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Կրթական բարեփոխումներու եւ յատկապէս հայ
ժողովուրդի պատմութեան եւ հայ գրականութեան վե-
րաբերող նախագիծը ստեղծած է թե՛ մթնոլորտ հայ-
րենիքի մէջ: Կարելի է տեսականօրէն ընդգծել, որ ար-
մատական իշխանափոխութիւնը բոլոր ոլորտներուն
մէջ հիմնական փոփոխութիւններու կը ձգտի եւ քա-
ղաքական վարքագիծը առանցքային կը դարձնէ
տարբեր մարզերու եւ գանձող ղեկավարող գերատես-
չութիւններու աշխատանքային ծրագիրներուն մէջ:

Որքէ՛ն հիմնական փոփոխութիւն տեղի կու տայ
բանավեճերու, գաղափարներու, տեսակետներու, նոյ-
նիսկ հասկացողութիւններու առումով միտքերու քա-
խումներու: Այս բոլորը կրնան բնական գործընթաց-
ներ համարուիլ, եթէ պատմութեան դասաւանդման
եղանակներուն, մեթոտներուն, մատուցման ձեւերուն
կամ դասանիւթը մանկավարժօժէն աւելի մատչելի
կամ գրաւիչ դարձնելուն կը վերաբերին:

Մտահոգութիւն կը ստեղծուի, երբ կը յայտնաբեր-
ուի, որ նոր չափորոշիչներ ճշդող եւ ո՛չ միայն մեթոտա-
բանութեան, այլ նաեւ բովանդակութեան առումով
հիմնական փոփոխութիւններ բերողներու փորձագի-
տական խումբէն որոշիչ անհատներ ներգրաւուած
եղած են թուրք պատմաբաններու հետ համատեղ
թուրքոյնոյ եւ հայ ժողովուրդի պատմութեան դասա-
ւանդման նոր չափորոշիչներու ճշգրտան ծրագիրնե-
րուն մէջ: Նման ծրագիրներ ի՞նչ անհրաժեշտութենէ
մեկնած են, որո՞նք նախաձեռնութիւն են եւ ի՞նչ տե-
սակի կեդրոններ ֆինանսատրուած են կամ պատ-
հիրուած՝ կը մնան ճշդելի:

Տարբեր հարց, որ այդ աշխատանքային ծրագիրի
եզրակացութիւնները իբրեւ հրատարակութիւն երեք
տարի առաջ հրատարակուած են: Կը մնայ ուսումնա-
սիրել եւ համեմատել, որ այդ եզրակացութիւններուն
հայ ժողովուրդի պատմութեան վերաբերող բաժինը
այս անգամ նոր չափորոշիչներու որդեգրման ճամբո՞ւլ
կը ճշդուի հայոց պատմութեան եւ գրականութեան
դասաւանդման ծրագիրներուն մէջ:

Բովանդակային քննարկումները մասնագիտական
հարթութեան վրայ պէտք է մնան: Դժբախտաբար
նման քննարկումներու չեն ներառուիր նաեւ սփիւռքա-
հայ պատմաբաններ եւ գրականագետներ: Ո՛չ միայն
սփիւռքի պատմութիւնը կամ սփիւռքահայ ժամանա-
կակից գրողները ներառելու առաջադրանքով, այլ նա-
եւ ընդհանրապէս հայ ժողովուրդի պատմութեան եւ
հայ գրականութեան դասաւանդման նոր չափորոշի-
չներ որդեգրելու աշխատանքը նկատի ունենալով: Եթէ
անշուշտ կ'ընդունինք, որ երկու կարեւորագոյն ուղ-
ղութիւնները համահայկական նշանակութիւն եւ բո-
ւանակութիւն ունին: Բայց այս ոլորտները միակը
չեն, ուր բացակայ է սփիւռքը:

Այս թե՛ քննարկումները պիտի շարունակուին:
Առաջարկելի էր, որ անոնք միայն մասնագիտական
հարթութեան վրայ՝ թե՛ պատմագիտութեան եւ գրա-
կանագիտութեան եւ թե՛ մանկավարժութեան եւ մեթո-
տաբանութեան առումներով:

Խնդիրը պետական ընկալումով այլ մտահոգու-
թիւններ կ'ընդգծէ: Կրթութեան, գիտութեան, մշակոյ-
թի եւ մարմնակրթութեան նախարարը այս առիթով
կը թիրախաւորէ «Դաշնակցութիւնը՝ գայն ամբաստա-
նելով՝ զօրավար Անդրանիկը թուրքերուն յանձնելու եւ
անկախութեան վերականգնման դէմ դիրքորոշուած
ըլլալու յանցանքներով:

Որքան ալ վարչակառավարական կամ քաղաքա-
կան պաշտօն ենթադրէ նախարարի հանգամանքը,
այդուհանդերձ ընկալուած օրինաչափութիւններ կան,
որոնք պէտք չէ խախտել: Նախարարի խօսքը, ելոյթը
կամ գրառումը պաշտօնական բնոյթ ունի: Զետեա-
բար կը ներկայացնէ նաեւ գործող կառավարութեան
տեսակետը այդ մարզին մէջ: Իսկ նախարարը նման
յայտարարութիւններ կատարելու համար պէտք է
հիմնուած ըլլայ միայն փաստացի տուեալներու վրայ:
Անկախութեան հանրաժողովին «Դաշնակցութեան պաշ-
տօնական յայտարարութիւններն ու հրապարակուած
կոչերը՝ «այո՛ր» բուռնաբերելու, նման յայտարարութիւն
կատարելու տուեալները չեն փոխանցեր նախարարին:
Իսկ Անդրանիկը յանձնելու մեղադրանքը յայտնա-
պէս կը բխի այն նամակի բովանդակութենէն, որ տար-
բեր առիթներով եւ յատկապէս Ազգային արխիւի տնօ-
րէնութեան կողմէ պաշտօնապէս յայտարարուեցաւ,
որ կերճ է եւ խորհրդային օրերուն «Դաշնակցութեան
դէմ բացուած համազարկի քարոզչական արշաւի ար-
տադրութիւն է:

Ազգային արխիւը պետական հաստատութիւն է:
Պետութիւնն է, այս պարագային, որ պաշտօնապէս կը
հերքէ ապատեղեկատուութիւնը: Նախարարը, կամ
բարձրաստիճան պաշտօնեան անպայման հաշուի
պիտի առնէ այս պարագային իրեն կապուած գիտա-
կան համապատասխան կեդրոնի պաշտօնական յայ-
տարարութիւնը: Նախարարը նման գրառումով ոչ թէ
կը հարուածէ «Դաշնակցութիւնը, կը հարուածէ նոյ-
նիկնք իր նախարարութեան կապուած Ազգային
արխիւի հաստատութիւնը:

Պետական հաստատութիւնները, մասնաւոր մեր
պատմութեան հիմնասիւնը հանդիսացող ազգային-
պետական արխիւը ամենէն առաջնային սկզբնաղ-
բիւրն է այս պարագային ժամանակակից պատմու-
թեան: Անտեսել գայն, կամ հակասել անոր եզրակա-
ցութիւններուն կը նշանակէ հարուածել պետական
հաստատութեան հեղինակութիւնը:

Պետական փորձառութիւնը, պետական հաստա-
տութիւններու հեղինակութիւնը չստուերելու գործա-
ռոյթը առաջին հերթին պետական բարձր պաշտօններ
վարողներէն կ'անկախուի:

Կառավարութեան կազմութեան համար պէտք է
ճշդել նոր չափորոշիչներ եւ անոնց շարքին, կառավա-
րութեան անդամներու համար նկատի ունենալ գուցէ
առաջին հերթին պետական հաստատութիւններու
պաշտօնական տեսակետներուն հետ հաշուի նստող
եւ գանձող չհակասող նախարարներ:

ՀՐԹԹԻ ՀՐԱԺԱՐԵՑԱՒ. ՇԱՐՊԵԼ ՈՒԵՀՊԷ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներ
ու հարցերու նախարար Նասիֆ Յըթթի երեկ
առաւօտեան ուղղուեցաւ վարչապետարան, ուր
իր հրաժարականը յանձնեց վարչապետ Յասսան
Տիապի:

Յըթթի հրաժարելու իր որոշումին մասին ոչ մէկ
յայտարարութիւն կատարեց, այլ՝ բաւարարուե-
ցաւ հրապարակելով հաղորդագրութիւն մը:

Յաղորդագրութիւնը կը նշէ, որ փառծութեան
եւ շահագործումի դէմ, ինչպէս նաեւ ընկերային
արդարութեան հաստատումի նպատակով ժո-
ղովրդային պոռթկումի մը լոյսին տակ արտաքին գործոց
նախարարի պարտա-
կանութեան ստանձնումը սովորական որոշում չէր,
այլ հիմնուած էր փոփոխու-
թեան եւ բարեկարգում իրագործելու յոյսերով:

«Սակայն տիրող իրականութիւնը վիճեցուց կազմուած յոյսի սաղմը, որ կրնար
խոստմանից ծնունդ ըլլալ», նշեց Յըթթի՝ աւելցնելով, որ ինք իր սկզբունքներէն,
համագումարէն ու խիղճէն ոչինչ պիտի զիջի՝ պաշտօն կամ իշխանութիւն ունե-
նալու հաշուով:

Յըթթիի հաղորդագրութիւնը կը նշէ նաեւ, որ Լիբանան կը սայթաքի՝ վերած-
ւելու համար ծախող պետութեան մը, եւ որովհետեւ ինք չի հաւատար, որ այս ըն-
թացքին միջազգային հասարակութեան պահանջած բարեկարգումները ամբող-
ջական կերպով կարելի պիտի ըլլայ իրականացնել, ապա կը հրաժարի իր պաշ-
տօնէն:

Արտաքին գործոց նախարարութենէ մեկնումի պահուն Յըթթի յաջողութիւն
մաղթեց բոլորին՝ հաստատելով, որ ինք ոչ մէկ ճնշումի ենթարկուած է Ազգային
ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան ժըպրան Պասիլի կող-
մէ:

Վարչապետ Տիապ Յըթթիի հրաժարականը ստանալէ ետք փութաց Պաապ-
տա, ուր հանդիպում մը ունեցաւ հանրապետութեան նախագահ գօր. Միշել Աու-
նի հետ՝ արտաքին գործոց նոր նախարարի նշանակումին շուրջ խորհրդակցու-
թիւններ կատարելու նպատակով:

Կէսօրէ ետք վարչապետ Տիապ երկրորդ անգամ ըլլալով ուղղուեցաւ նախա-
գահական պալատ, ուր նախագահ Աունի հետ ընդունեց Նասիֆ Յըթթիի հրաժա-
րականը, եւ Շարպէլ Ուեհպէ նշանակեց արտաքին գործոց եւ արտերկրի լիբա-
նանցիներու նախարար:

Յըթթիի հրաժարականը ընդունող եւ Ուեհպէն նախարար նշանակող գոյգ
հրամանագիրները նախագահական պալատի մէջ կարդաց նախարարաց խոր-
հուրդի ընդհանուր քարտուղար Մահմուտ Մաքքիէ:

ՇԱՐՊԵԼ ՈՒԵՀՊԷԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Շարպէլ Ուեհպէ ծնած է Աքուրա, 15 յուլիս
1953-ին:

Ուեհպէ աւարտած է Լիբանանեան համալսա-
րանի իրաւաբանական բաժանմունքը, 1979-ին,
նոյն տարին ան հետեւած է նաեւ իրաւաբանական
ուսման՝ «Սաժէ» համալսարանին մէջ: 1974-ին
աւարտած է Լիբանանեան համալսարանի ուսու-
ղութեան բաժանմունքը:


Կը տիրապետէ երեք լեզուներու՝ արաբերէն,
անգլերէն եւ ֆրանսերէն:

2017-ին, երբ դեսպան Ուեհպէ հանգստեան
կոչուեցաւ՝ արտաքին գործոց նախարարութենէն,
ուր ան կը վարէր նախարարութեան ընդհանուր
քարտուղարի պաշտօնը, հանրապետութեան նա-
խագահ գօր. Միշել Աուն գայն նշանակեց դիւանագիտական հարցերու իր
խորհրդատուն:


Շարպէլ Ուեհպէ ունեցած է 42 տարուան դիւանագիտական ասպարեզ մը:
Ամուսնացած է Տոյի Բահիմի հետ եւ ունի երեք զաւակ:




Նասիֆ Յըթթի, արտաքին գործոց նախարար:



Շարպէլ Ուեհպէ, արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու նախարար:



Նասիֆ Յըթթի, արտաքին գործոց նախարար:



Շարպէլ Ուեհպէ, արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու նախարար:



Նասիֆ Յըթթի, արտաքին գործոց նախարար:



Շարպէլ Ուեհպէ, արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու նախարար:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ԿԳՄՄ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՈՒ ՆԱԽԱԳԻԾԻՆ ՄԱՍԻՆ

Ամիսներէ ի վեր, ամբողջ աշխարհը մխրճուած է խորունկ ճգնաժամի մէջ, իսկ համահայկական հասարակութիւնը ա՛յլ աւելի: Ափիւռքահայութեան մի-
շինարեւելեան գաղութները գոյատեւման պայքար կը տանին, իսկ մասցեղ
գաղութները լծուած են անոնց օժանդակութեան հասնելու աշխատանքին:
Այս արդէն ցաւալի վիճակին բարդուեցաւ թագաժառի համավարակը, որ
փաստօրէն ամլացուց մարդկութեան՝ եւ ի մասնաւորի հայկական գաղութնե-
րու բնակատն գործունեութիւնը:
Միւս կողմէ, թագաժառի ուժեղ կերպով ցնցուած մեր հայրենիքին մէջ
տեղի կ'ունենան իրադարձութիւններ, որոնք հեռահար նախատեսելի ազդե-
ցութիւնն ու հետեւեցնելու աւելի՛ մտահոգութեան կը պատճառեն, քան որեւ-
է անցողիկ համաճարակ, որ վերջիվերջոյ մարդկային ճարտարութեան շնոր-
հիւ անպայման պիտի յաղթահարուի:
Շուրջ ամիս մը առաջ հրապարակուեցաւ Յայաստանի Յանրապետու-
թեան Ազգային անվտանգութեան ռազմավարութիւնը, որուն բովանդակու-
թեան մէջ միայն հարեւանցիօրէն նշուած են մշակոյթն ու կրթութիւնը, բայց
անոնք վարչապետի ներածական ուղերձով ներկայացուած են խմբուած են
«Ազգային արժէքներ» ու «Ազգային նպատակներ» վերնագիրները կողմ
բաժիններուն մէջ. անոնք նշուած են, բայց կը թուի, որ անոնց ուղղութեամբ շատ
ընելիք չկայ: Մինչդէռ նախորդ՝ 2007-ի տարբերակին մէջ լայն տեղ գտած էին
ազգային ինքնութիւնը, կրթութիւնն ու մշակոյթը, հայապահպանումը: Մէկ
խօսքով՝ նոր ռազմավարութեան մէջ նշեալ ոլորտներուն վրայ ուշադրու-
թիւնը կարեւոր չափով գեղջուած է:
Ինչ ամիս առաջ հայկական միջավայրին ներկայացուեցաւ համալսարան-
ներէն ներս հայերէնն ու հայոց պատմութիւնը այլեւ ուսումնական պարտա-
դիր առարկաներ չհամարելու նախագիծը, որ որդեգրուեցաւ հակառակ
բարձրաձայնուած բռնա թողոքներուն: Ամբողջ գործընթացի տեւողութեան,
նկատելի էր համապատասխան ոլորտի նախարարին ոչ յարգալի վերաբե-
րումը իր ընդդիմախօսներուն հանդէպ:
ՀԱՍՏԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍԻՈՒԹԵԱՆ ԿԵՐԻՐՈՒՄԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Շար.ը՝ էջ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԱԾ Է ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ

3 օգոստոսին Յայաստանի Յանրապետութեան
պաշտպանութեան նախարար Դաւիթ Տոնոյեան հե-
ռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Լիբա-
նանի պաշտպանութեան նախարար, փոխվարչա-
պետ Չէյնա Աքրին հետ:

Յայաստանի պաշտպանութեան նախարարը
շնորհաւորած է իր գործընկերը՝ լիբանանեան բա-
նակի հիմնադրութեան 75-ամեակին առիթով:

Շար.ը՝ էջ 4

ՄԱՆԱԳԷՏՆԵՐԸ ԱՆՎԱՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԺՊՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵՆ ՀԱՆՐԱԿՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՈՒՆ ԿԱՍՏԱՐԵ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

«ԱՍԻԿԱ ԱԶԳԱՅԻՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ Է»

Պատմութեան չա-
փորոշիչները մշա-
կած խումբի ղեկա-
վար Լիլիթ Մկրտչե-
ան թուրք հեղինակ-
ներու հետ գրած աշ-
խատութեան մէջ
հայկական դասա-
գիրքերու հեղինակ-
ները մեղադրած է
այն բանի համար, որ
հայ կիները անտես-
ուած են եւ անոնք հայրիշխանական հասարակու-
թիւն կը ներկայացնեն՝ ըստ «Երկիր»-ին յայտարա-
րեց Յայաստանի Յանրապետութեան Գիտութիւննե-
րու ազգային ակադեմիայի Պատմութեան հիմնարկի
տնօրէն Աշոտ Մելքոնեանը «Յանրակրթական դպրո-
ցի պատմութեան ծրագիրներու նախագիծերու,
անոնք ետին կանգնած ուժերու գործունեութեան եւ
յարակից հարցերու մասին» նիւթով մամլոյ ասուլիսի
ընթացքին:



Շար.ը՝ էջ 4

ԱՐՑԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ ԱՐԱՅԻ ԶԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ ՎԱՐԱԾ Է ԵՐԿՐԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ



Արցախի Յանրապետութեան նախագահ Արայիկ
Յարութիւնեանի նախագահութեամբ 3 օգոստոսին
տեղի ունեցած է կառավարութեան անդրանիկ
նիստ:

Արցախի Յանրապետութեան նախագահի աշխա-
տակազմի տեղեկատուութեան ընդհանուր վարչու-
թենէն կը տեղեկացնեն, թէ նիստի օրակարգին վրայ
ընդգրկուած էր «Արցախի Յանրապետութեան 2020-ի
պետական պիտոճէի մասին» օրէնքին մէջ փոփոխու-
թիւններ կատարելու մասին հարցը, որ Արցախի
Յանրապետութեան կառավարութեան անդամնե-
րուն ներկայացուցած է Արցախի Յանրապետութեան
Ելեմուտքի նախարար Վահրամ Բաղդասարեանը:
Ան նշած է, որ նախագիծը մշակուած է ի կատա-
րում Արցախի Յանրապետութեան նախագահի
2020-2025 թուականներու ծրագրի շաբթ մը դրոյթ-
ներու, ըստ որոնք, Արցախի Յանրապետութեան
2020-ի պետական պիտոճէի ծախսերը կը նախա-
տեսուի աւելցնել 14,810 միլիոն դրամով, իսկ պետա-
կան պիտոճէի եկամուտները՝ 5,100 միլիոն դրամով՝
պայմանադրուած Յայաստանի Յանրապետութեան
ստացուող պիտոճէական վարկի գումարի չափով:
Փոփոխութիւններու հիմանը կառավարութիւնը հա-
մաձայնութիւն տուած է օրէնքի նախագիծին, որ, ըն-
թացակարգի համաձայն, պիտի ուղարկուի Ազգային
ժողովի քննարկման:

ԼԻՔԱՆՆԵՆԻ ՄԵՋ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐՈՎ ՎԱՐԱԿՈՒՄԵՆԵՐՈՒՆ ԹԻՒՆ ՀԱՍԱԻ 5062-Ի, ՄԱՀՈՒՄՆ ՊԱՐԱԳՎՆԵՐՈՒՆԵՐ՝ 65-Ի, ԻՍԿ ՊԱՎՔԻՆԱԾՆԵՐՈՒՆԵՐ՝ 1837-Ի

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԱԿԵ ԿԵ ԿՈՐՄՆՑՆԵ ԻՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԷՆ ՄԵԿԸ



Մինչ «Քորոնա» համաճարակին գծով յայտարարում ընդհանուր զորաշարժի դրույթները պիտի շարունակուի մինչև երկուշաբթի, 10 օգոստոս 2020, այսօր՝ երեքշաբթի, 4 եւ վաղը՝ չորեքշաբթի, 5 օգոստոսին բոլոր մարզերը պիտի կարենան գործել՝ ճշդույնով նախագրույթներն ու չափանիշները յարգելով:

Այս շրջագծին մէջ, երկէ երկուշաբթի հաղորդուեցաւ, որ «Քորոնա»-ի համաճարակին դէմ պայքարող Լիբանանի ազգային շտապ կառավարութեան պիտի յանձնարարէ հինգշաբթի, 6 օգոստոս 2020-էն երկուշաբթի, 10 օգոստոս 2020՝ ընդհանուր զորաշարժի դրույթներ կողքին նաեւ կրակմարի դրույթներ յատարարել՝ խտացնելով նախագրույթական միջոցառումները, նոյնիսկ Պէյրութի միջազգային օդակայանին մէջ:

«Ռասուլ Ազգամ» հիւանդանոցը երկէ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը կը Նէ, թէ երկուշաբթի սկսեալ մինչեւ շաբաթ, 15 օգոստոս 2020 կասեցուցած է իր արտաքին բժշկական գրասենեակներուն մէջ հիւանդներ ընդունիլ, նկատի ունենալով «Քորոնա»-ի համաճարակին տարրուղիները եւ երաշխաւորելով հիւանդներուն անվտանգութիւնը՝ վարակուելու իմաստով:

Հարդրագրութեան մէջ նշուեցաւ, որ «Ռասուլ Ազգամ» հիւանդանոցը պիտի ընդունի լուրջ եւ անմիջական խնամքի կարիք ունեցող պարագաները, ինչպէս նաեւ պիտի արգիլէ հիւանդանոցին մէջ գտնուող հիւանդներուն կատարուելիք այցելութիւնները:

«Ռասուլ Ազգամ» հիւանդանոցը կոչ ուղղեց քաղաքացիներուն քթափազ գործածելու եւ ընկերային հետադուրեւում պահելու, ինչպէս նաեւ նախագրույթական բոլոր միջոցառումներուն յանձնառու մնալու: Ըստ հաղորդագրութեան, իւրաքանչիւր հիւանդի մօտ կրնայ միայն անոր ընտանիքէն մէկ հոգի մնալ, պայմանով որ ան «Փ. Սի. Ար.»-ի քննութիւն կատարած ըլլայ:

Միւս կողմէ, «Քորոնա» ժախի պատրուկումը կատարող «Փ. Սի. Ար.»-ի քննութեան առումով, տեղեկատուութեան նախարար Մանալ Ապտէլ Սամատ յայտնեց, որ իր նախարարութեան անձնակազմը ենթարկուած է այդ քննութեան, եւ բոլորին արդիւնքները ժխտական են:

Ապտէլ Սամատ անցուց, որ նախարարութեան մէջ բոլորը քթափազ կը գործածեն եւ ընկերային հեռաւորութեան պայմանը կը յարգեն:

Իր կարգին, ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Մոհամետ Ֆահմի յայտնեց, որ ընդհանուր զորաշարժի ընթացքին արգիլուած է հարսանիք եւ հարսանեկան խրախճանքներ կազմակերպել: Ան նշեց, որ նման որոշումներ միայն իրեն կը վերաբերին եւ իր իրաւասութիւններուն մէջ կ'իյնան, յատկապէս նկատի ունենալով, որ երկիրը փակելու որոշումը պարտաւորող հրամանագիրը իր ստորագրութիւնը կը կրէ:

Ֆահմի հաստատեց, որ իր պարկեշտութիւնը չ'արտօնէ, որ համեստ դասակարգի քաղաքացիներուն հարանիքները արգիլէ, իսկ հարուստ դասակարգիները՝ արտօնէ:

Շար. ը՝ էջ 4

ԼԻՔԱՆՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

● ԳՐԶՊԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՐ քարտուղար սեյիտ Հասան Նասրալլա վաղը՝ չորեքշաբթի, 5 օգոստոս 2020-ին, երկուշաբթի ժամը 8:30-ին պիտի արտասանէ պատկերասփռուած ճառ մը, որուն ընթացքին պիտի անդրադառնայ երկրին քաղաքական իրադարձութիւններուն եւ զարգացումներուն:

● ԿՐԹՈՒԹԵԱՆ Եւ բարձրագոյն ուսման նախարար Թարեք Մաժուպ յայտնեց, որ կրթական տարեշրջանը պիտի սկսի սեպտեմբեր եւ հոկտեմբեր ամիսներուն միջեւ՝ անցնելով, որ նախարարութիւնը վերամուտի ամբողջական ծրագիրը պիտի հրապարակէ:

● ԱԶՍԱԳՐՈՒՄ Եւ բարգաւաճում պլոքի երեսփոխան Ջասէմ Հաշեմ յայտնեց, որ «Բանակ, ժողովուրդ, դիմադրութիւն» տարազը լիբանանցիներուն մտահոգութիւնները փարատած է:


● ԱՐԿՐՈՒԹԵԱՆ Նախկին նախարար Շարլ Ռոզը հաստատեց, որ նախկին վարչապետ Սաատ Հարիրի գիտէ, թէ իր հօր՝ Ռաֆիք Հարիրիի սպանութեան վերաբերող վճիռը պետք չէ շահագործուի՝ լիբանանցիներուն միջեւ երկփեղկումը անելի եւ սրելու եւ խորացնելու նպատակով:

● ՇՈՒՄՅՈՒՐԻՎՈՒՄ՝ օրաթերթին համաձայն, ուժանկիւթի եւ ջուրի հարցերու նախարար Ռեմոն Դաժար ելեկտրակառուցութեան թղթածրարի հարցը քննարկած է Միջազգային դրամատան եւ Միջազգային դրամական ֆոնտի ներկայացուցիչներուն հետ:

«ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՄԵՋ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ ՉԱՅՆԸ, ԻՍԿ ԼԻՔԱՆՆԵՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐՈՒՆ Կ'ԸՍԵՄ. ԼԻՔԱՆՆԵՆԸ ՉԵՉԻ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ»

ՇԵՇՏԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՕՀԱՆԵԱՆ-ԳԵՈՐԳԵԱՆ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Վարդիէ Օհանեան-Գեորգեան կիրակի, 2 օգոստոս 2020-ին «Օ. Թի. Վի.» պատկերասփռուի կայանէն հարցազրոյցի մը ընթացքին անդրադարձաւ «Քորոնա»-ի համաճարակին տարածումը կանխարգիլելու իմաստով երկիրը փակելու կառավարութեան որոշումին, նախարարութեան վերաբերող հարցերուն, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ տիրող ներկայ ընդհանուր իրավիճակին:



տասարդական քաղաքականութեան գործադրութեան ծրագիրը՝ գործակցութեամբ ԵՆՆԻՒՍԵՖ-ի, «ԵՆ. ԷՆ. ԷՖ. Փի. Էյ.»-ի եւ լիբանանեան երիտասարդական միութիւններու», անցուց ան:

Նախարար Օհանեան-Գեորգեան հաստատեց նաեւ, որ «Քորոնա»-ի համաճարակը իր հետեանքները կ'ունենայ մարմնակրթութեան մարզին վրայ: Ան ըսաւ, որ ինչպէս բոլոր մարզերը, մարմնակրթութեան մարզը եւս գործելու չափանիշներ ունի եւ նախագրույթներուն ցանկ մը, որ որդեգրուած է բոլորին կողմէ: «Ընդհանուր զորաշարժը կը վերաբերի բոլորին, հետեւաբար անոր գործադրութիւնը ուղղակիօրէն կապուած է բոլորին յանձնառութեան, որուն չգոյութեան պարագային, դժբախտաբար պիտի ուղղուիք երկիրը ամբողջովին փակելու պարտաւորութեան», շեշտեց ան:

Նախարար Օհանեան-Գեորգեան նշեց, որ 2022-ին Պէյրութը պիտի ըլլայ արաբ երիտասարդութեան մայրաքաղաքը: «Անկախ մեծ իրադարձութիւն է, որուն կազմակերպումը պետք է սկսինք այսօրուցնէ, եւ այդ իրադարձութիւնը պիտի ըլլայ պետական մակարդակով», յայտնեց ան:

Նախարար Օհանեան-Գեորգեան ընդգծեց, որ կառավարութիւնը պետք է անելի արդիւնաբեր աշխատանք տանի՝ անցնելով սակայն, որ կառավարութիւնը կը գիտակցի երկրին դիմագրուած ներկայ դժուար եւ զգայուն փուլին, եւ այս իմաստով ամէն շանք ի գործ կը դնէ նուաճումներ իրագործելու: «Արդէն իսկ կատարուած են մեծ թիւով կարելու նշանակումներ՝ յարգելով Լիբանանը բաղկացնող բոլոր շերտերուն ներկայութիւնը, ինչպէս նաեւ հիմնուելով

«Ներկայ փուլը վտանգաւոր է՝ այն իմաստով, որ մենք կը խօսինք կենաց մահու մասին, հետեւաբար բոլորէն կը խնդրեմ հետեւիլ կառավարութեան որոշումներուն եւ նախանձախնդրութիւն ցուցաբերել ընդհանուր զորաշարժին հետեւելու»:

«Ծի՛ղ՛ է, որ «Քորոնա»-ի ժախի տարածման սկզբնական փուլին կառավարութիւնը կրցաւ իր որոշումներով կացութիւնը հակակշռել, եւ կը յուսանք, որ այս փուլին եւս՝ նոյնքան եւ անելի պատասխանատուութեամբ պիտի փորձենք ապահովել քաղաքացիներուն առողջութիւնը: Ներկայ փուլը վտանգաւոր է՝ այն իմաստով, որ մենք կը խօսինք կենաց մահու մասին, հետեւաբար բոլորէն կը խնդրեմ հետեւիլ կառավարութեան որոշումներուն եւ նախանձախնդրութիւն ցուցաբերել ընդհանուր զորաշարժին հետեւելու, որպէսզի կարենանք ապահովել լիբանանցիներուն բարօրութիւնը», ըսաւ ան:

Նախարար Օհանեան-Գեորգեան յայտնեց, որ ընդհանուր զորաշարժ յատարարելուն իմաստով կառավարութեան նիստին ընթացքին արձանագրուած են տարբեր կեցուածքներ՝ անցնելով, որ կարելի չէ ատիկա նախարարներուն միջեւ բանավեճ կոչել, «այլ՝ բնական խորհրդակցութիւն եւ տարբեր կեցուածքներու արտայայտութիւն, որ առողջ է եւ ժողովրդավարական: Կառավարութեան նիստերուն ընթացքին խորհրդակցութիւնը միշտ առկայ է, իսկ խնդրոյ առարկայ նախարարին կարծիքը միշտ յարգելի՝ նկատի ունենալով, որ կացութիւնը ուղղակի որոշ նախարարութեան կը վերաբերի: Ես անձամբ համաձայն եմ, որ ընդհանուր զորաշարժ յատարարուի եւ երկիրը փակուի, որովհետեւ խոցելի փուլ մը մէջ ենք: Պետք է յստակ ըլլայ բոլորին համար, որ մենք քաղաքացիներ չենք փափաքիլ խեղդել, այլ՝ կ'ուզենք լիբանանցիներուն առողջութիւնը պահպանել», յայտնեց ան:

«Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութիւնը «Ուժային» նախարարութիւն մըն է: Լիբանանեան պետութիւնը պետք է իր տեսակետը փոխէ այս իմաստով եւ ուշադրութիւն դարձնէ այս նախարարութեան»:

Նենալով, որ կացութիւնը ուղղակի որոշ նախարարութեան կը վերաբերի: Ես անձամբ համաձայն եմ, որ ընդհանուր զորաշարժ յատարարուի եւ երկիրը փակուի, որովհետեւ խոցելի փուլ մը մէջ ենք: Պետք է յստակ ըլլայ բոլորին համար, որ մենք քաղաքացիներ չենք փափաքիլ խեղդել, այլ՝ կ'ուզենք լիբանանցիներուն առողջութիւնը պահպանել», յայտնեց ան:

Երիտասարդութեան վերաբերող հարցերուն մասին հարցումի մը պատասխանելով՝ նախարար Օհանեան-Գեորգեան հաստատեց, որ այսօր լիբանանցի երիտասարդները ունին բազմաթիւ մտահոգութիւններ եւ մտավախութիւններ, որոնք տեղին են: Ան նշեց, որ կառավարութիւնը պետք է պատասխանէ երիտասարդութիւնը մտահոգող հարցումներուն, իսկ կառավարութիւնը իր որդեգրելիք բարեկարգումներով ճիշդ ուղիին վրայ կը գտնուի՝ լուծելու համար երկրին հարցերը եւ նոյն ներշնչելու Լիբանանի երիտասարդութեան:

«Պետք է լաւ ըմբռնել այն իրականութիւնը, որ երիտասարդութեան հարցերը միայն մէկ նախարարութեամբ չեն սահմանափակուիր, որովհետեւ լիբանանցի երիտասարդին կարիքները կը վերաբերին բոլոր նախարարութիւններուն, որոնք իրենց կարգին պետք է տրէ կանգնին լիբանանցի երիտասարդներուն», հաստատեց ան:

Նախարար Օհանեան-Գեորգեան նշեց, որ լիբանանեան պետութիւնը նախորդ երկու տասնամեակներուն ընթացքին երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան նկատմամբ ցուցաբերած է «գոհացումի» նախարարութիւն մը ըլլալու մօտեցումը, «մինչդէռ այս նախարարութիւնը «ուժային» նախարարութիւն մըն է, անելի ճիշդ՝ կարելորագոյն նախարարութիւնը: Լիբանանեան պետութիւնը պետք է իր տեսակետը փոխէ այս իմաստով, ուշադրութիւն դարձնէ այս նախարարութեան եւ վերացնէ անոր աշխատանքը խոչընդոտող բոլոր արգելքները՝ սկսելով անոր պիտոճէն: Նախարարութեան պիտոճէն պետութեան ամսվարկին 0.09 առ հարիւրի համեմատութիւնը ունի, այսինքն՝ անոր նկատմամբ կը ցուցաբերուի այն վարուելակերպը, որ այդ նախարարութիւնը կարծեք գոյութեան չունի՝ իրաւասութիւններու, մարդուժի, կարողութիւններու իմաստով: Կը կարծեմ, որ լիբանանցի երիտասարդներուն պահանջը այս է իրենց պետութեան, մանաւանդ որ իրենք են Լիբանանի ապագան», ըսաւ նախարար Օհանեան-Գեորգեան:

«Երիտասարդութեան նախարարութիւնը այսօր կը մշակէ երիտասարդական քաղաքականութեան գործադրութեան ծրագիրը՝ գործակցութեամբ ԵՆՆԻՒՍԵՖ-ի, «ԵՆ. ԷՆ. ԷՖ. Փի. Էյ.»-ի եւ լիբանանեան երիտասարդական միութիւններու»:

Նախարարութեան աշխատանքներուն մասին հարցումի մը պատասխանելով՝ նախարար Օհանեան-Գեորգեան հաստատեց, որ տեղի կ'ունենայ օրէնսդրական հսկայական աշխատանք, ինչպէս նաեւ կը կատարուի նախարարութեան կանոնագրի բարեփոխում, նախարարութեան կազմաւորումի արդիականացում, որպէսզի նախարարութիւնը գետնի վրայ աշխատանք կարենայ տանի: «Այսօրուան դրութեամբ նախարարութիւնը գետնի վրայ գործելու իրաւասութիւն չունի», ըսաւ ան:

Նախարար Օհանեան-Գեորգեան հաստատեց, որ լիբանանեան պետութիւնը 2012-ին վաւերացուցած է երիտասարդական քաղաքականութիւնը եւ որդեգրած գայն: Այս քաղաքականութեան մէջ ներգրաւուած են շուրջ 12 նախարարութիւններ, ինչպէս՝ առողջապահութեան, աշխատանքի, տնտեսութեան, էլեմուտեղի նախարարութիւնները: «Երիտասարդութեան նախարարութիւնը այսօր կը մշակէ երի-

«Կառավարութիւնը տուած է Կեդրոնական դրամատան հաշիւները քննելու նպատակով իրականացուած հաշիւներու կատարելու որոշումը, որ փտածութեան դէմ պայքարի եւ բարեկարգումներու գործադրութեան մայր մուտքն է»:

ատակութեան եւ թափանցիկ աշխատանքի չափանիշներուն վրայ: Բարեկարգումներու գործադրութեան առումով, կառավարութիւնը տուած է Կեդրոնական դրամատան հաշիւները քննելու նպատակով իրականացուած հաշիւներու կատարելու որոշումը, որ փտածութեան դէմ պայքարի եւ բարեկարգումներու գործադրութեան մայր մուտքն է», ըսաւ նախարար Օհանեան-Գեորգեան՝ անցնելով, որ իր անձնական առաջարկն էր կառավարութեան նաեւ, որ իրականացուած հաշիւներու քննարկումը պետք է իրականացուի արագ, ինչպէս նաեւ Լիբանանի հանրային կեանքին մէջ ծառայող ոչ կառավարական կազմակերպութիւններուն հաշիւներուն պարագային:

Նախարար Օհանեան-Գեորգեան հաստատեց, որ այս կառավարութիւնը որոշած է իր գործունեութեան առանցքը դարձնել բարեկարգումներն ու երկրին ու քաղաքացիներուն բարօրութեան համար կատարուելիք աշխատանքները՝ առանց բացարձակապէս բազմելու քաղաքական տարակարծութիւններով: «Այս շրջագծին մէջ կ'ուզեմ հաստատել, որ կառավարութիւնը կամ նախարարները բացօթում չեն արձանագրեր իրենց ստանձնած պատասխանատուութիւններուն մէջ: Հետեւաբար Ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն հազարապէս-գործակար Ապպաս Իպրահիմի վստահուած վարտականութիւնները այլոց բացը լեցնելու քայլեր

«Կոչ կ'ուղղեմ շահագործող ամենէն փոքր առեւտրականէն մինչեւ ամենէն մեծ ներածողը հաշուետուութեան ենթարկել»:

չեն, այլ՝ յստակ պարտականութիւններ, որոնք Լիբանանի պատմութեան ընթացքին միշտ ալ վստահուած են Ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէններուն, որոնք հիմնական դերակատարութիւն ունեցած են լուրջ հարցեր լուծելու իմաստով», ընդգծեց ան:

Ան հաստատեց, որ իր անձնական կարծիքով՝ Լիբանանի դիմագրուած տնտեսական տագնապը հետեւանք է կուտակուած պարտքերու, որդեգրուած սխալ քաղաքականութեանց եւ ազատական տնտեսութեան:

Նախարար Օհանեան-Գեորգեան կոչ ուղղեց շահագործող ամենէն փոքր առեւտրականէն մինչեւ ամենէն մեծ ներածողը հաշուետուութեան ենթարկել:

Ան շեշտեց, որ Լիբանանի քաղաքական կեանքին մէջ կուտակուած ցուցիչներու դերակատարութիւնը ամբաստանութիւն պետք չէ նկատել: «Անշուշտ կառավարութեան մէջ իմ ներկայութիւնս քա-

«Քաղաքական բոլոր ուժերուն կ'ըսեմ, որ կացութիւնը անհանդուրժելի է եւ գործակցութիւնը՝ անհրաժեշտութիւն»:

ղաքացիական ընկերութեան ներկայութիւն է, բայց եւ այնպէս հպարտ եմ, որ լաւ յարաբերութիւններ ունիմ ՀՀ-ի եւ հայկական միւս կուտակութիւններուն հետ», նշեց ան:

Նախարար Օհանեան-Գեորգեան յայտնեց, որ կառավարութեան կազմութեան բանակցութիւններուն ընթացքին լիբանանահայ համայնքը եղած է միակ կողմը, որ հաստատած է, թէ պատրաստ է ստանձնելու որեւէ նախարարութիւն, որովհետեւ անոր հիմնական նպատակը երկիրը անխիչաբար փրկելն է:

«Իրապէս ալ հայ համայնքին կողմէ ամէն շանք ի գործ դրուած է՝ յաշտօնելու համար կառավարութեան կազմութիւնը: Եւ իբրեւ այդպիսին եւ իբրեւ կառավարութեան կրտսերագոյն անդամը, ես նախարարաց խորհուրդին մէջ կը ներկայացնեմ երիտասարդութեան ձայնը: Գիտե՛ք որքան դժարութիւններ կը դիմագրուէք, գիտե՛ք որքան յուսախաբ եք, գիտե՛ք որքան թերանաւ տեք պետութեան եւ իշխանութիւններուն նկատմամբ, բայց Լիբանանը ձեզի կը պատկանի: Դուք պիտի մնաք երկրին մէջ, այս երկիրը ձեզի է: Իսկ քաղաքական բոլոր ուժերուն կ'ըսեմ, որ կացութիւնը անհանդուրժելի է եւ գործակցութիւնը՝ անհրաժեշտութիւն», եզրափակեց նախարար Օհանեան-Գեորգեան:

«ԱԶԳԱԿ»-Ի ՖՈՆԾԻՆ
● Լիբանանի ներկայ պայմաններուն մէջ քաղաքացիական պայքարի մը աշխատանքները՝ Ազգային մը 300.000 լիբ. ոսկի

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ



Պուրճ Գրականության քաղաքացիականությունը հրապարակեց հաղորդագրություն մը, որուն մէջ լուսաբանութիւններ տուաւ աղբերու հարցին մասին:

Վերջին ժամանակաշրջանին բազմաթիւ շրջաններու մէջ, ներառեալ Պուրճ Գրականութեան մէջ վատթարացաւ աղբերու կուտակման երեւոյթը:

Պուրճ Գրականութեան քաղաքացիականութիւնը այս առնչութեամբ ստացաւ բազմաթիւ դիմումներ ու գանգատներ:

Այս ծիրին մէջ պետք է յստակացնել հետեւեալը:

Ա.- Փողոցները աւելու եւ աղբը հաւաքելու պարտականութիւնը կառավարութեան որոշումով եւ Բարձրագոյն քաղաքացիական խորհուրդի պայմանագիրով վերապահուած է «Ռամբո» ընկերութեան:

Բ.- «Ռամբո» ընկերութիւնը հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ իր պաշտօններէն կարելի չէ մնալ վարակուած է «Զորոն» ժահրով, եւ անոնք ստիպուած մեկուսացումի ենթարկուած են՝ ժամանակաւոր կերպով կրճատելով իր աշխատակազմի թիւը:

Գ.- Պուրճ Գրականութեան քաղաքացիականութեամբ է կարգ մը բեռնակառքեր ու բանտներ՝ օժանդակելու այս աշխատանքին, մասնաւորապէս ժամերուն, երբ պատասխանատու ընկերութեան աշխատանքային խմբակներ չեն շրջիր, կամ այն թաղերուն համար, ուր անոր մեծ բեռնակառքերը չեն կրնար մտնել: Սակայն ասիկա չի նշանակել, որ քաղաքացիականութեամբ ստանձնած է այս աշխատանքը, այլ՝ կ'օժանդակէ այդ աշխատանքին իր շրջանին ու բնակչութեան ծառայելու նպատակով:

Դ.- Պուրճ Գրականութեան քաղաքացիականութեամբ շրջանի բնակիչներուն կը կ'ուղղէ գործակցութեան՝ շրջանցելու համար այս դժուարութիւնները, կը խնդրուի մասնաւորապէս կապել աղբի տոպրակները եւ զանոնք թափել միայն անոնց յատկացուած վայրերուն մէջ:

Ե.- Պուրճ Գրականութեան քաղաքացիականութեամբ կը հաւաստէ, որ առնչութիւն ունեցող կողմերուն հետ կը հետապնդէ այս թղթածրարը, եւ ոչ մէկ ճիգ պիտի խնայէ պատշաճ լուծումներ գտնելու եւ պահպանելու շրջանի կենսոլորտն ու բնակիչներու առողջութիւնն ու ապահովութիւնը:

ՊՈՒՐՃ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԱՐՏԻԿ ԴՊՐՈՍՏԵԱՆ

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ԼՐԱՏՈՒԱՄԵՉՈՑՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԱՐԱԾԱՆԵՐՁՆԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՌՅԱՆՑ ԽՈՐՀՐԳԱԿՑՈՒԹԻՒՆԸ



Նախաձեռնութեամբ Լրատումի շրջաններու համաժողովները համակարգող խորհուրդին, հինգշաբթի, 30 յուլիսին, Երեւանի ժամանակացոյցով ժամը 19:00-ին տեղի ունեցաւ Միջին Արեւելքի մէջ գործող հայկական լրատումի շրջաններու տնօրէններու եւ խմբագիրներու տարածաշրջանային առցանց խորհրդակցական նիստը:

Նիստին մասնակցեցան Լրատումի խորհուրդի Հայաստանի, Արցախի եւ սփիւռքի անդամները, Հայաստանի վարչապետի մամուլ բաժնէրը, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանը, Լիբանանի, Երեւանի, Արաբական Միացեալ Էմիրութիւններու, Եգիպտոսի եւ Պուլմի մէջ գործող հայկական լրատումի շրջաններու պատասխանատուները:

Աւելի քան երկու ժամ տեւած խորհրդակցութեան օրակարգը կը վերաբերէր ներկայ ճգնաժամային պայմաններուն մէջ լրատումի շրջաններու որդեգրած աշխատակարգերու հետ առնչուած խնդիրներուն, տեղեկագրութեան նորարարութեան ընձեռած ներկայ կարելիութիւնները արդիւնաւէտ օգտագործելու, Ազրայէճանի յարձակողապաշտութեան վերջին գործողութիւններուն մասին լրատումի շրջանները ներկայացնելու եւ տարածելու ճիշդ եղանակներուն, ինչպէս նաեւ շրջանային եւ համահայկական լրագրողական ցանցերը մայրուկ կերպով աշխատեցնելու հրամայականներուն:

Տարածաշրջանային առցանց նիստերը պիտի շարունակուին. յաջորդ նիստը պիտի ներառէ եւրոպական տարածաշրջանը: Թուականի եւ օրակարգի մասին լրատուադաշտը վերահասու կ'ըլլայ շուտով:

ՀՀ ԿԳՄՄ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ...

Ճարտնական Ա. Էջէն

Այժմ կարգը եկած է հանրային վարժարաններու ուսումնական ծրագրի բարեփոխութեան, արդիականացման, ներկայի պահանջներու պատշաճեցման եւ յարակից հարցերու, գործընթաց մը, որ որեւէ հասարակութիւն պարբերաբար կը կատարէ բժախնդրութեամբ եւ առանց խուճապի: Այսպէս, քանի մը օրեր առաջ ներկայացուցան «Հայոց պատմութիւն», «Համաշխարհային պատմութիւն», «Հասարակագիտութիւն», «Ես եւ իմ հայրենիքը», «Հայոց լեզու» եւ «Գրականութիւն» դասերու չափորոշիչներն ու օրինակները:

Անշուշտ ուսումնական ծրագիրներու արդիականացման, մանկավարժական եւ մեթոտաբանական խնդիրները, ինչպէս եւ հեղինակներու եւ գրողներու ընտրութիւնը մասնագիտական հարցեր են, որոնց մասին հասարակութիւնը շատ ըսելիք չ'ունենար. սակայն այս պարագային, ծրագիր ու դասագիրքերու բովանդակութիւնը ճշդող անհատներու ինքնութիւնը, անոնց կողմէ նկատուած եւ գրողներու ընտրութիւնը ցոյց կու տան կատարուած գործի նպատակը, մասնաւորապէս՝ երբ ռազմավարութիւնը ի սկզբանէ յստակօրէն չ'է սահմանուած ու բացատրուած:

Լուրջ վերապահութիւններ կան Հայոց պատմութեան, Հայերէն լեզուի եւ գրականութեան ծրագիրներու վերաբերմամբ, ուր վտանգի տակ են ազգային դաստիարակութիւնը ամրապնդող մօտեցումները: Այս ուղղութեամբ ՀՀ Գիտութիւններու ազգային ակադեմիայի Պատմութեան հիմնարկի տնօրէն ակադեմիկոս Աշոտ Մելքոնեան կը պատրաստուի դիմել Ազգային անվտանգութեան ծառայութեան հարցի համապատասխան ընտրութեան համար: Նոյն ահազանգային մտահոգութիւնները կ'արտայայտէ Երեւանի պետական համալսարանի Հայոց պատմութեան ամպիոնի վարիչ փրոֆեսոր Արտակ Մովսիսեանը:

Երկուքն ալ կը մատնանշեն, որ չափորոշիչներն ու մօտեցումները առնուած են «History Education in Schools in Turkey and Armenia: A Critique and Alternatives» (Պատմութեան ուսուցումը Թուրքիոյ եւ Հայաստանի դպրոցներէն ներս. քննադատութիւն եւ այլընտրանքներ) աշխատութենէն, որուն մէջ մանրամասնօրէն ներկայացուած է, թէ ի՞նչ չափորոշիչներով պէտք է առաջնորդուի Հայաստանի եւ Թուրքիոյ մէջ պատմութեան դասագիրքերու հեղինակները: Հայ-թրքական ուղեցուցային հատորի պատրաստութեան համար հանդիպումներուն մասնակցած հայ պատմաբաններուն այսօր վստահուած է Հայաստանի մէջ գործածուելիք Հայոց պատմութեան դասագիրքերու պատրաստութեան համար չափորոշիչներու սահմանումը:

Համապատասխան հարցազրույթները մըն ալ «Հայոց լեզու» եւ «Գրականութիւն» դասանիւթերուն անդրադարձաւ Երեւանի պետական համալսարանի Հայ բանասիրութեան բաժանմունքը, որուն գիտական խորհուրդը հիմնադրուած պատճառներով իր խոր մտահոգութիւնը, անվտանգութիւնը եւ մեթոտը յայտնեց ներկայացուած «Հանրակրթութեան պետական առարկայական չափորոշիչներու եւ ծրագրերու» նկատմամբ: Այս գլխուն տակ, մենք լրջօրէն անհանգստացած ենք վերատեսութեան ենթակայ չափորոշիչներու եւ ծրագիրներու մէջ սփիւռքահայ գրականութեան տրուած անցողակի ուշադրութեան համար: Սփիւռքահայ գրականութիւնը, ըստ ամենայնի, առաջնակարգ տեղ կը գրաւէ աշխարհով մէկ տարածուած հայկական գաղութները հայրենիքին զօդելու ճիգին մէջ:

Այս գործընթացներէն կը հետեցնենք, որ կրթական մարզի շահագործումով, երկար վազքի վրայ կը փորձուի յաջողցնել հայեթպէս յարաբերութիւններու բարելաւումը՝ առանց Հայոց ցեղասպանութեան ճանաչումին եւ համապատասխան հատուցման: Ատենին, շնորհիւ հայութեան արթնամտութեան, այս մարզէն ներս ձախողեցաւ ԹԱՐԵ-ը (Թուրք-հայկական հաշտութեան յանձնախումբ): Աւելի ուշ Նոյն ճակատագիրը ունեցաւ նաեւ «Ֆուլթայլային դիմահարկութիւն»-ը, որ սկսաւ 2008-ին՝ արժանանալով անփառուակ ձախողութեան 2018-ին:

Հայոց պատմութեան, Հայերէն լեզուի եւ գրականութեան ներկայացուող նոր ծրագիրները կոչուած են ծառայելու Նոյն նպատակին՝ տարիներու վրայ երկարելով. հետեւաբար անոնք ըստ ամենայնի մերժելի են:

Հայոց ցեղասպանութեան յիսնամեակէն ի վեր հայութիւնը պայքարեցաւ անոր միջազգային ճանաչման համար: Հիմա կ'ապրին յաջորդ փուլին մէջ: Բաւական ճամբայ կորած ենք: Կանգ առնելու ժամանակը չ'է, մասնաւորապէս իր հայութիւնը դէմ յանդիման կը գտնուի բազմաթիւ մարտահրաւերներու: Մենք կը գտնենք, որ Հայոց պատմութեան դասագիրքերը հիմնուած պէտք է ըլլան բացառաբար իրականութեան եւ ճշմարտութեան վրայ, առանց նկատի ունենալու որեւէ օտար ուժի կամ շրջանակի փափաքներն ու շահերը: Հայութիւնը պիտի ունենայ միայն ու միայն հայկական եւ ազգային արեւելում: Միայն այդ ձեւով հայկական կրթութիւնը կը ծառայէ հայութեան եւ կը նպաստէ հայկական մշակոյթի զարգացման:

Առ այդ, կ'անկկալենք, որ ՀՀ ԿԳՄՄ Նախարարութիւնը վերատեսութեան ենթարկէ հանրային ընտրական ներկայացուցած Կրթութեան չափորոշիչներու Նախագիծը եւ Նախանձախնդիր ըլլալ անոր առանցքը դարձնելու ազգային արժէքները, հայ ժողովուրդը բնորոշող ազգային եւ մշակութային բաղադրանքները եւ սփիւռք-հայրենիք միասնութեան տանող դրոյթները. այդ Նախագիծը պէտք է արժանանայ մասնագետներու առարկայական ընտրական, եւ անոնց հնչեցուցած նկատողութիւններն ու թելադրած շտկումները պէտք է ներառուին անոր մէջ: Կը հաւատանք, որ այդպիսով միայն կարելի պիտի ըլլայ երաշխարարել իրերայաջորդ սերունդներու ազգային նկարագիրին ու ինքնութեան կերտումը, որոնք անելի քան կենսական են հայ ազգի նման ժողովուրդի մը, որ իր լեզուի եւ մշակոյթի պահպանմամբ կրցած է հայրենիքէն ներս թէ հեռու գոյատեւել ու բարգաւաճիլ:

Վերջապէս, այսու կը յայտնենք մեր պատրաստակամութիւնը այս գործընթացին մեր մասնակցութիւնը բերելու, նշեալ խնդրայարոյց հարցերը բարոյց լուծման հասցնելու նպատակով:

Պէրլուր, 2 օգոստոս 2020

Առցանց Լսարան



ԱԶԳԱԿ ՕՐԱԿԵՐ



Զորեքշաբթի, 5 օգոստոս 2020-ին, երեկոյեան Պէրլուրի ժամանակացոյցով ժամը 18:00-ին:

Մասնակցութեան համար գրել minas777@gmail.com եւ նամակին կամ +961 70 80 70 50 համարին (WhatsApp)

Սփիւռք՝ Ինքնութիւն եւ Վերադարձ

Զեկուցող՝ Փրոֆ. Հայկ Օշական Ուէյն սթեյթ համալսարան



ՀՅԴ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԿԵՄԻՏԵՆ

Զորեքշաբթի, 5 օգոստոս 2020-ին, ժամը 18:30-ին, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ կը ներկայացնէ

ԸՈՐՈՆԱՅԻ ԿԵՄԻՏԵՆ ԵՎ ՕԺԱՆԳԱԿՈՒԹԵԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՐ ԶԵԿՈՅՑ

Ներկայութեամբ՝ լիբանանահայ միութիւններու եւ հաստատութիւններու ներկայացուցիչներու եւ պատասխանատուներու

ԺԱՄԸ ԸՍՏ ԾՐԱՊԵՆՆԵՐՈՒ

- ՀԱՅԱՍՏԱՆ՝ 19:30
ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ՝ 8:30
ՆԻՒ ԵՈՐԸ՝ 11:30
ՔԱՆԱԿ՝ 11:30
ՄԻՓԱԼՔՆԻՆ՝ 12:30
ՖՐԱՆՍԻՆ՝ 17:30
ԳԵՐՄԱՆԻՆ՝ 17:30
ՏՈՒՊԱՑ՝ 19:30
ՍԻՏԼԻՆ՝ 1:30
ՈՒՐՈՒԿՈՒԹԵՑ՝ 12:30
ՅՈՒՆԱՍՏԱՆ՝ 18:30

Հաւաքը պիտի սփռուի առցանց

ՀՅԴ Լիբանան, ARF Lebanon, Tashnag
Հայ Ցեղափոխական Դաշակցութիւն / Armenian Revolutionary Federation
Aztg Daily
Radio Voice of Van - Վանայ Ձայն

ՄԱՀԱԶԳ

Լիբանանահայ օգնութեան խաչի Շրջանային վարչութիւնը կը գուժէ իր նախկին վարչական անդամուհիներէ՝

ՄԵԴԱ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 3 օգոստոս 2020-ին:

ՄԱՀԱԶԳ

Լիբանանահայ օգնութեան խաչի Շրջանային վարչութեան Ձեռարուեստի յանձնարումը կը գուժէ իր նախկին անդամուհիներէ՝

ՄԵԴԱ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 3 օգոստոս 2020-ին:

ՄԱՀԱԶԳ

Լիբանանահայ օգնութեան խաչի «Նայիրի» մասնաճիւղը կը գուժէ իր շրջանի հաւատարմ անդամուհիներէ՝

ՄԵԴԱ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 3 օգոստոս 2020-ին:

ՄԱՀԱԶԳ

Տէր եւ տիկին Թորոս եւ Զանի Մեսրոպեան եւ զաւակները՝ Մերի եւ Վարագ

ՄԵԴԱ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

Տէր եւ տիկին Ժամար Պրապրեան եւ զաւակները՝ Զարկ, Սերժ եւ Սարիան

ՄԵԴԱ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

Տէր եւ տիկին Գալուստ եւ Լուսին Մեսրոպեան եւ ընտանիք

ՄԵԴԱ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Արզումանեան եւ Թապիպեան

ՄԵԴԱ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Շահինեան եւ Պրապրեան ընտանիքներ

ՄԵԴԱ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Ճապուրեան եւ Եղիշեան ընտանիքներ

ՄԵԴԱ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Պարտուսեան եւ Ճուլփայեան

ՄԵԴԱ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիք եւ համայն ազգայններ կը գուժեն իրենց մօր, կէսրոջ, մեծ մօր, մօրաքոջ, հօրաքոջ եւ հարազատին՝

ՄԵԴԱ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիքներ Ճապուրեան եւ Եղիշեան ընտանիքներ Պարտուսեան եւ Ճուլփայեան

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիք եւ համայն ազգայններ կը գուժեն իրենց մօր, կէսրոջ, մեծ մօր, մօրաքոջ, հօրաքոջ եւ հարազատին՝

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիքներ Ճապուրեան եւ Եղիշեան ընտանիքներ Պարտուսեան եւ Ճուլփայեան

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիք եւ համայն ազգայններ կը գուժեն իրենց մօր, կէսրոջ, մեծ մօր, մօրաքոջ, հօրաքոջ եւ հարազատին՝

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիքներ Ճապուրեան եւ Եղիշեան ընտանիքներ Պարտուսեան եւ Ճուլփայեան

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիք եւ համայն ազգայններ կը գուժեն իրենց մօր, կէսրոջ, մեծ մօր, մօրաքոջ, հօրաքոջ եւ հարազատին՝

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիքներ Ճապուրեան եւ Եղիշեան ընտանիքներ Պարտուսեան եւ Ճուլփայեան

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիք եւ համայն ազգայններ կը գուժեն իրենց մօր, կէսրոջ, մեծ մօր, մօրաքոջ, հօրաքոջ եւ հարազատին՝

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիքներ Ճապուրեան եւ Եղիշեան ընտանիքներ Պարտուսեան եւ Ճուլփայեան

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիք եւ համայն ազգայններ կը գուժեն իրենց մօր, կէսրոջ, մեծ մօր, մօրաքոջ, հօրաքոջ եւ հարազատին՝

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիքներ Ճապուրեան եւ Եղիշեան ընտանիքներ Պարտուսեան եւ Ճուլփայեան

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիք եւ համայն ազգայններ կը գուժեն իրենց մօր, կէսրոջ, մեծ մօր, մօրաքոջ, հօրաքոջ եւ հարազատին՝

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիքներ Ճապուրեան եւ Եղիշեան ընտանիքներ Պարտուսեան եւ Ճուլփայեան

Տիար Լեւոն Մեսրոպեան եւ ընտանիք Տիարեան ընտանիք եւ համայն ազգայններ կը գուժեն իրենց մօր

«ՄԻՋԵՐԿԱՐԱԿԱՆ ԾՈՒՎՈՒ ԱՐԵՒԵԼԵՆ ԸՆԴՈՒՄԻՆ ՄԵՋ ԹՈՒՐԻՔԻՈՅ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԽԱՆՏԵՆ ՄԵՐ ԳԵՐԻՇԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ Կ'ԸՍԵ ԵԳԻՊՏՈՍ



Եգիպտոսի արտաքին գործոց նախարարությունը հրապարակած է յայտարարություն մը՝ անդրադառնալով Թուրքիոյ կողմէ Միջերկրական ծովու արեւելեան հատուածին մէջ հորատման աշխատանքներու ծրիղին մէջ ծրագրուած հետազոտութիւններուն:

Յայտարարութեան մէջ մասնաւորաբար կը նշուի, որ Թուրքիոյ այդ գործողութիւնները կը խախտեն Գահիրէի գերիշխան իրաւունքները: Այս մասին կը գրէ թրքական «Կազեթ Երընճա» օրաթերթը: «Թուրքիան իր հետազոտութիւններով կ'ոտնահարէ Եգիպտոսի բացառիկ տնտեսական գոտին եւ կը խախտէ Գահիրէի գերիշխան իրաւունքները», նշուած է յայտարարութեան մէջ:

Նախորդ ամիս Եգիպտոսի արտաքին գործոց նախարարութեան տարածած մէկ այլ յայտարարութեան մէջ նշուած էր. «Թուրքիոյ նաւերը խախտած են Եգիպտոսի ջրային սահմանը»: Եգիպտոսական կողմը Թուրքիոյ քայլերը կը բնորոշէ իբրէս «յարձակում»:

Յետազոտութիւնները կազմի հետախուզման նախապատրաստական աշխատանքներն մէկն են: Միջերկրական ծովու արեւելեան հատուածի պետութիւններուն հետ Թուրքիոյ յարաբերութիւնները սրած են իր կողմէ այս երկիրներու ջրային տարածքներուն մէջ հորատման աշխատանքներուն սկսելէն ետք:

ԱՐՑԱՆԻ ՆԱԽԱԳԱՂ...

Շարունակուած Ա. Էջէն

Այնուհետեւ երկրի ղեկավարը նիստի մասնակիցներուն ներկայացուցած է նախատեսուող բարեփոխումները՝ ըստ ոլորտներու: «Խոշոր ենթակառուցածքային նախագիծերու իրականացումը թոյլ կու տայ շրջանցել համաշխարհային տնտեսութեան անկման հաւանական բացասական հետեւանքները մեր հանրապետութեան համար», նշած է Արայիկ Յարութեանեան եւ անցնուցած, որ ընթացիկ ծրագիրներու յաջող իրականացման պարագային յաջորդ տարի կը սպասուի երկնիչ տնտեսական աճ:

Խոշոր ընդհանուր քանակութեամբ ծրագիրներու արդիւնաւետ իրականացման մասին՝ նախագահը ընդգծած է Հայաստանի Հանրապետութեան պետական մարմիններուն հետ սերտ համագործակցութեան, ինչպէս նաեւ պետական կառավարման համակարգի իւրաքանչիւր օղակի մէջ պաշտօնէական բարեփոխող վերաբերմունքի, կարգապահութեան, օրէնքի դիմաց բոլորին հաւասարութեան, աշխատանքային խումբերու մէջ ներդաշնան մթնոլորտի պահպանման սկզբունքներուն հետեւելու անհրաժեշտութիւնը: Միաժամանակ, երկրի ղեկավարը գոչուցուցած է, որ այն պետական պաշտօնէականները, որոնք աշխատանքն ու վարչապետը կը հակասեն այդ սկզբունքներուն, ազատ պիտի կացուցուին իրենց պաշտօնէներէն:

Նախագահը նաեւ կարեւոր նկատած է հանրապետութեան մէջ ձեւաւորուած ներքին կայունութեան մթնոլորտի պահպանումը, որ թոյլ կու տայ իրականացնել Արցախի Հանրապետութեան առջեւ ծառայած երկու կարեւորագոյն խնդիրները՝ անվտանգութեան ապահովումը եւ ընկերային-տնտեսական զարգացումը: Այդ ծիրին մէջ նախագահը ընդգիծելով ուժերուն կոչ ուղղած է՝ զբաղելու միայն կառուցողական քննադատութեամբ եւ գերծ մալու ստեղծուած կայունութիւնը խաթարող քայլերէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Չորացակիցները քննարկած են երկու երկիրներու զինուած ուժերուն միջ համաճարակային իրավիճակը, կարծիքներ փոխանակած փոխգործակցելու լրացուցիչ կարելիութիւններուն ստեղծման շուրջ: Չէյնա Աքը ընդգծած է Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերու ստորաբաժանման մասնակցութեան կարեւորութիւնը հարաւային Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ՖԻՆԻԼ-ի խաղաղապահ ուժերու առաքելութեան մէջ, որուն իբրէս պատասխան՝ Հայաստանի պաշտպանութեան նախարարը վերահաստատած է հայկական կողմին վճռականութիւնը շարունակելու գործը:

Դաւիթ Տոնոյեան ու Չէյնա Աքըը անդրադարձած են նաեւ շրջանային ռազմաքաղաքական զարգացումներուն եւ երկկողմանի համաձայնագիրներու շրջագիծին մէջ ռազմական համագործակցութեան ընդլայնման ու խորացման անհրաժեշտութեան:

ԾԱՆՈՒ ՅԱՐԿԱՐԱՄԻՆ

Պուրճ Համուտ, «Հարպոյեան» շէնքեր, «Շաղզոյեան» կերտիկի դիմաց, 160 քառ. մետր, Պլոք Ա., 2-րդ յարկ: Դիմել՝ հեռ. 03-709758:

ԹՈՒՐԵԻԱ ԱՓՈՍԱՆԸ ԿԸ ՅԱՅՏԵ ԸՐՏԱԿԱՆ ՈՒՇԵՐՈՒ ԵՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԸ ՄԻՋԵՒ ԿԼԵՈՒՄԸ ԶԱՐԻՂԻ ԳՈՐԾԱՐԵՆ ԶԱՍԱՐ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը արձագանգած է Սուրիոյ ժողովրդավարական ուժերուն եւ ամերիկեան «Տէլ-թա Երեսըն Եւրոփ» ընկերութեան միջեւ Սուրիոյ հիւսիս-արեւելքին մէջ քարտէսային արդիւնաւորութեան վերամշակման վերաբերեալ կնքուած համաձայնագիրին: Այս մասին կը հաղորդէ «Անատոլու» լրատու գործակալութիւնը:



«Սուրիոյ բնական հարստութիւնները կը պատկանին սուրիացի ժողովուրդին: Մենք ափսոսանք կը յայտնենք, որ Միացեալ Նահանգներ կ'աջակցին այս քայլին, որ կ'ոտնահարէ միջազգային օրէնքները, Սուրիոյ տարածքային ամբողջականութիւնն ու գերիշխանութիւնը՝ յօգուտ ահաբեկչութեան: Ասիկա ոչ մէկ օրինական

դրդապատճառներով կրնայ արդարացուիլ, ասիկա ամբողջովն անընդունելի է», նշուած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան հրապարակած յայտարարութեան մէջ: Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը նաեւ նշած է. «Զրտական ուժերը նպատակ ունին սուրիացի ժողովուրդի հարստութիւնները օգտագործելու միջոցով անջատողական օրակարգ յառաջ մղել»:

ԵՐՈՂՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԵՋ ԿՈՉ ՈՐԴՈՒՄԸ Ե ՊԱՏՄԱՏԻՋՈՑՆԵՐ ԶԱՍԱՏԵԼՈՒ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՈՐՈՇ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐՈՒ ԴԵՄ

Երուզական խորհրդարանին մէջ մեծուպէսով երկրորդ խմբակցութիւնը՝ «Ընկերավարականներու եւ ժողովրդավարականներու յառաջադէմ դաշինք»-ը կոչ ուղղած է Երուզական Միութեան պատժամիջոցներ կիրարկելու ազդուութեան հրոշ պաշտօնատարներուն դէմ:

Այս մասին կը յայտնեն Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի երուզական համարկման հարցերու մայրու յանձնախումբէն: «Հաշուի առնելով Ազգային մէջ մարդու իրաւունքներու առնչուած իրավիճակին լոյզութիւնը՝ Երուզական Միութեան կոչ կ'ուղղենք թիրախաւորուած պատժամիջոցներ հաստատելու

ազդուութեան այն պաշտօնատարներուն դէմ, որոնք պատասխանատու են Ազգային մէջ ընդդիմութեան եւ քաղաքացիական հասարակութեան դէմ բռնաճնշումներուն համար», նշուած է խմբակցութեան յայտարարութեան մէջ:

Յայտարարութեան մէջ նաեւ կ'ընդգծուի, որ անթոյլատրելի է, որ Ազգային մէջ խախտուած իրաւունքները մէջ զինուորական լարուածութեան աճը կ'օգտագործէ իբրէս պատրուակ՝ երկրին մէջ քաղաքական ընդդիմութեան մնացորդներու դէմ զննարկուած համար:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ «ՔՈՐՈՆԱ» ԺՎՅՐՈՎ...

Շարունակուած 2-րդ էջէն

Ան ընդգծեց, որ հարստեանկան խրախմբները կատարած 7 պարագաներ տուգանուած են՝ անցնելով, որ ինք իր դերակատարութիւնը պիտի շարունակէ՝ իրեն տրուած իրաւասութիւններուն շրջագիծին մէջ:

Նշենք, որ 6-10 օգոստոս երկարող ինքնօրէն այս ժամանակամիջոցին բոլոր հաստատութիւնները փակ պիտի մնան, եւ «Քորոնա» ժահրի տարածումին դէմ որդեգրուած զգուշութիւնները պարտադիր պէտք է գործադրուին:

Այս օրերուն ընթացքին փակ պիտի մնան մարզադահլները, մարզադաշտերը, մարզական ակումբները, խորհրդաժողովներու յատուկ սրահները, հանրային պարտէզները, խաղափայտերը, ժողովրդային շուկաները, ծովագիծի քաղաքային մայրերը, լողաձագանները, ելեղեցիներն ու մզկիթները, թատերասրահներն ու շարժապատկերի սրահները:

Այս բոլորին կողքին պիտի ջնջուին կրօնական բոլոր առիթները, մարզական մրցումները, իսկ զբօսաշրջութեան նախարարութեան որոշումով պիտի փակուին ճաշարաններն ու սրճարանները, ինչպէս նաեւ պիտի կասեցուի բնակարանները սննդեղէն եւ պատրաստ ճաշ առաքելու ծառայութիւնը:

Անուշակամներուն ու ճաշարաններուն պարագային, ընդհանուր գործարարի օրերուն ընթացքին անոնք պիտի գործեն առաւօտեան ժամը 6:00-էն երեկոյեան ժամը 8:00, պայմանով որ անոնք իրենց վաճառատուներուն մէջ յաճախորդներ չընդունին եւ բաւարարուին անուշեղէնի ապսպրանքները բնակարանները առաքելու ծառայութեամբ:

Ճաշարաններուն եւ սրճարաններուն կողմէ կլկակներու բնակարանային առաքումը եւս արգիւտուած է:

Առողջապահութեան նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, երէկ Լիբանանի մէջ «Քորոնա» ժահրով վարակուածներուն թիւը հասաւ 5062-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 177 նոր վարակուածներ, որոնցմէ 159-ը տեղացիներ, իսկ 18-ը՝ Պէյրութ վերադարձած քաղաքայիններ: Նախարարութիւնը յայտնեց, որ

գարը «Քորոնա» ժահրով 65 վարակուած պարագաներ մահացած են, իսկ 1837 ուրիշներ՝ ապաքինած:

Պէտք է անցնել, որ երէկ առաւօտեան Պէյրութի կառավարական հիւանդանոցի տնօրէն Ֆիրաս Ապիտ գուժեց հիւանդանոցի բուժքոյրերէն Չէյնա Հայտարարի մահը, որ պատահեցաւ «Քորոնա» ժահրով վարակուած հիւանդները խնամելու ընթացքին:

«Չէյնա Հայտարարի մըն է, սպիտակ բանակի անդամ. ան հիմա շատ անելի լաւ վայրի մէջ է», նշեց Ապիտ՝ թուիթթեան իր գրառումով: Ֆիրաս Ապիտ Չէյնա Հայտարարի ընտանիքին համբերութիւն եւ միախորհրդի մաղթեց՝ կոչ ուղղելով բոլորին գոչուանալու «Քորոնա» ժահրին սպառնացած վտանգէն եւ գործադրելու նախազգուշական միջոցները:

Հիւանդապահներու սենտիքան եւ Վերժահրուի մարքասպա գիւղաքաղաքին քաղաքապետութիւնը իրենց կարգին գուժեցին Չէյնա Հայտարարի մահը:

Պէյրութի կառավարական հիւանդանոց գուժեց իր բուժքոյրերէն Չէյնա Հայտարարի մահը՝ հաստատելով, որ անոր յուղարկուածութեան արարողութեան ընթացքին մէկ վայրկեան յոտնկայա լուծեամբ պիտի յարգէ անոր յիշատակը:

Առողջապահութեան նախարար Համուտ Հասան գուժեց 47-ամեայ Չէյնա Հայտարարի մահը՝ հաստատելով, որ «Քորոնա» ժահրի տարածումին դէմ պայքարող լիբանանեան ազգային շտապը կ'ուղղուի երկիրը 15 օրով փակելու՝ յայտարարելով առողջապահական արտակարգ վիճակ եւ ոչ թէ գիւտարական արտակարգ վիճակ:

Հասան ընդգծեց, որ կան հինգ հիւանդանոցներու տնօրէններ, որոնք հարցաքննութեան պիտի ենթարկուին՝ հիւանդները մերժելու յանցանքին պատճառով:

Ան հաստատեց, որ ցամաքային եւ ծովային սահմաններէն Լիբանան մուտք գործող անհատները եւս «Փի. Սի. Ար.» քննութիւն պիտի կատարեն՝ իրենց քանակէն, նախքան Լիբանան մուտք գործելը:

«ՌՈՒՄԻՈՅ» ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՅԱՐԱՊԱԿՈՒՄԵՆ ՀՐԱԺԱՐԵԼՈՒՆ ՊԱՐԱԳԱՅԻՆ, ԱՆՈՐ ԴԵՄ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՊԱՏՄԱՏԻՋՈՑՆԵՐԸ ԱՅԼԵՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՉԵՆ ԸԼԼԱՐ» Կ'ԸՍԵ Օ'ՊՐԱՅՆԸ

Ռուսիոյ դէմ պատժամիջոցները այլեւ անհրաժեշտ պիտի չըլլան, եթէ Մոսկուան «դադրեցնէ արտերկրի մէջ նախադրականութիւնը եւ դառնայ Միացեալ Նահանգներու ու Եւրոպայի բարեկամ գործընկերը»: Այս մասին յայտարարած է Միացեալ Նահանգներու նախագահի ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական Ռապըթ Օ'Պրայնը:

Օ'Պրայնը «Ռաշիսկլթըն Փոսթ» օրաթերթին մէջ հրապարակուած իր յօդուածին մէջ թուարկած է այն բազմաթիւ պատժամիջոցները, որոնք Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Քրամփի հաստատած է Ռուսիոյ դէմ:

«Ռանըլտ Ռիկլընի ժամանակներէն ի վեր Միացեալ Նահանգներու ոչ մէկ նախագահ Մոսկուայի դէմ այսքան վճռականութիւն ցուցաբերած է: Նախագահ Քրամփը նախագահ Ռիկլընի նման կը ձգտի Ռուսիոյ հետ յարաբերութիւններուն մէջ հասնելու նոր ուղիի, այնպիսին, որուն մէջ Ռուսիան գերծ պիտի մնայ արտերկրի մէջ նախադրականութեան եւ պիտի դառնայ Միացեալ Նահանգներու ու Եւրոպայի բարեկամ գործընկերը: Այդպիսի աշխարհի մէջ Ռուսիոյ դէմ պատժամիջոցները պէտք պիտի չըլլան, եւ մեր երկիրներուն միջեւ առեւտուրը պիտի ծաղկի: Ռուսերը, ամերիկացիները եւ ամբողջ աշխարհը օգուտ պիտի ստանան այդպիսի յարաբերութիւններէն», գրած է Օ'Պրայնը:

Խօսելով Ռուսիոյ հետ Միացեալ Նահանգներու հաւանական համագործակցութեան ոլորտներուն մասին՝ Օ'Պրայնը նշած է, որ յառաջիկայ ամիսներուն երկու երկիրները կրնան երկխօսութեան սկսիլ ահաբեկչութեան դէմ պայքարի հարցով:

«Թէ՛ Ռուսիան, թէ՛ Միացեալ Նահանգները իրենց տարածքներուն մէջ ծայրայեղականներու յարձակումներու ենթարկուած են: Միացեալ Նահանգներու պաշտօնատարները հաւանաբար յառաջիկայ ամիսներուն այս նիւթով կապի մէջ մտնեն իրենց հետախուզական եւ իրաւապահ մարմիններու ռուս գործընկերներուն հետ», նշած է Քրամփի խորհրդակալը:

Բացի ատկէ, ըստ ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատարին, Միացեալ Նահանգներ յոյս ունին Ռուսիոյ եւ Չինաստանի հետ համաձայնութիւն գոյացնելու հիւլեական բոլոր սպառնալիցութիւններու սահմանափակման շուրջ:

ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ԱՆՎԱՏԱԿՈՒԹԻՒՆ...

Շարունակուած Ա. Էջէն

«Որպէսզի ցոյց տան, թէ որքան նսեմացուցած ենք հայ կնոջ դերը պատմութեան մէջ, մեզ կը քննադատեն, թէ ինչու չենք յանդիմանած Արտաշէսին, որ անսմօթաբար գնաց, պարտաւը նետեց եւ գետի միւս ափէն Սաթենիկը առեւանգեց, մէջքն ալ ցարցուց. հապա կնոջ հանդէպ այդպիսի վերաբերմունք կարելի է»: Կը պատկերացնէ՞ք, անիւթեթը ո՛ր հասած է՝ մարդիկ նստած, մտածած են, թէ կարելի է օրինակ բերել, որ հայ մարդը անտեսած է հայ կնոջ», նշեց Աշոտ Մելքոնեան:

Ան ընդգծեց, որ բոլորը գիտեն, թէ հայ մարդուն համար հայ կինը, որ մայր է առաջին հերթին, քոյր է, սրբութիւն է, եւ մենք՝ հայերս, որպէս ընտանեկան ընկալման առումով բարձր աստիճանի վրայ կանգնած, ինչպէս միշտ մեծարած ենք հայ կնոջ. «Եւ ուրեմն եղաւ, որ մենք անտեսած ենք հայ կնոջ... խայտառակութիւն է: Դուք անգամ մը կարողացէ՛ք Անգլիոյ, Ֆրանսայի, Միացեալ Նահանգներու կամ Ռուսիոյ պատմութիւնը, տեսէ՛ք՝ գիշեր-ցերեկ կինները ստեղծած են պատմութիւնը»:

Աշոտ Մելքոնեան նշեց, որ բոլոր հաւանական թագուհիներու անունները մեր դասագիրքերուն մէջ կան՝ Երատոյէն սկսեալ, մինչեւ Փառանձմէմ, Այծեմիկ եւ միւսները: Յետաքրքրականը այն է, որ Նոյնիսկ մեր պատմաբանները առանձին աշխատութիւններով անորադարձած են. Արտաշէսը հայոց թագուհիներու մասին աշխատութիւն ունի եւ Երկի Միլասեանը երկու գիրք գրած է՝ ազգային ազատագրական շարժման մէջ հայ կնիւներու դերակատարութեան մասին:

«Միևնչեք տողատակի կը քննադատուինք մենք՝ բոլորս, այն մարդիկը, որ հայոց պատմութիւնը դասաւանդած են այդ խումբի անդամներուն», ըսաւ Աշոտ Մելքոնեան:

Մեր հիմնարկը քննարկած է, եւ աշխատակիցներու մեծագոյն մասը գտած է՝ որ ասիկա ազգային անվտանգութեան խնդիր է եւ զուտ գիտակրթական խնդիր ըլլալէ արդէն տեղափոխուած է այդ դաշտը, ուստի մենք յայտարարութեամբ մը հանդէս եկած ենք ԱՄՏ-ի ուշադրութիւնը հրապարակելու հարցին վրայ. ըստ «Երկիր»-ին՝ յայտարարեց Աշոտ Մելքոնեանը ատուլիսի ընթացքին:

Յայտարարութեան մէջ պատմաբանները նաեւ նշած են, որ եթէ չափորոշիչները մշակող յանձնախումբը կ'անտեսէ նախորդ դասագիրքերը՝ գաւտն օրակնելով խորհրդային ժամանակներու շուկայ գրուածներ, ապա թող բարի ըլլան հաշուի առնել Հայոց պատմութեան անպարտական հատորները, որոնք անաչառ պատմութիւնը կը ներկայացնեն Հայաստանի եւ սփիւռքի լաւագոյն պատմաբաններու մատուցումով:

Յայտնենք, որ «Երկիր»-ի հրապարակումէն ետք, որով կը բացայայտուի, որ «պատմութիւն» եւ «հասարակագիտութիւն» նիւթերու չափորոշիչները մշակող յանձնախումբի անդամները արտասահմանեան դրամաշնորհային ծրագիրներ իրականացուցած են՝ Թուրքիոյ հանդէպ թշնամի կերպարը վերացնելու ուղղութեամբ եւ երկու աշխատութիւն հրապարակած այս նիւթով. լայն հանրութիւնը անվտանգութեան կը յայտնէ հանրակրթութեան չափորոշիչները այդ ոգիով շարադրելու գործընթացին: Մասնագետները կ'արձանագրեն չափորոշիչներու հակահայկական յստակ դրսեւորումներ: Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի Պատմութեան հիմնարկը այս հարցին վրայ կը հրապարակէ Ազգային անվտանգութեան ծառայութեան ուշադրութիւնը: